Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
դեկտեմբերի 24-ի N 932 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԺԱՆ ԵՎ ԱԼԲԵՐ ՊՈՂՈՍՅԱՆՆԵՐ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է՝ վերանորոգել «Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի «Ժան և Ալբեր Պողոսյաններ» արվեստի դպրոցի շենքը և բարեկարգել վերջինիս կից տարածքը, ինչպես նաև բարելավել դպրոցում սովորող երեխաների ու պատանիների ուսումնական պայմանները և գործընթացը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Պողոսյան» հիմնադրամ (Բելգիա, 1050 Բրյուսել, Ֆրանկլին Ռուզվելտի փողոց 67)
4.	Ծրագիրը կատարողը	«Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամ (Գյումրի, Ա.Խաչատրյան 1, ՀՎՀՀ 05533381)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, քաղ. Գյումրի, Ա. Խաչատրյան 1, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	58,800,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի «Ժան և Ալբեր Պողոսյաններ» արվեստի դպրոց հաճախող 6-18 տարեկան շուրջ 300 երեխաներն ու պատանիները (250-ը՝ անվճար հիմունքներով, 50-ը՝ մասնակի վճարումով)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	• Շենքի ընթացիկ վերանորոգում և տարածքի բարեկարգում – տարեկան մոտ 12,000,000 դրամ և մոտ 36,000,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար: • Կոմունալ-կենցաղային ծախսեր – տարեկան մոտ 4,200,000 դրամ և մոտ 12,600,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար: • Դաշնամուրի, ջութակի, վոկալի, փողային նվագարանների, ազգային նվագարանների, հարվածային գործիքների, ազգային և ժամանակակից պարերի, կիրառական արվեստի ուսուցման գործընթացի բնականոն ընթացքի ապահովման համար անհրաժեշտ ուսումնական և այլ պարագաների ձեռքբերում - տարեկան մոտ 500,000 դրամ և մոտ 1,500,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար: • Դաշնամուրի, ջութակի, վոկալի, փողային նվագարանների, ազգային նվագարանների, հարվածային գործիքների, ազգային և ժամանակակից պարերի, կիրառական արվեստի ուսուցման գործընթացի համար անհրաժեշտ երաժշտական գործիքների և ուսումնական պարագաների ներմուծում-տարեկան մոտ 2,000,000 դրամ և մոտ 6,000,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար: • Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր-տարեկան մոտ 900,000 դրամ և մոտ 2,700,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներքոնշյալ ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման (ներմուծման) շրջանակներում ակնկալվում են հարկային արտոնություններ՝ - տարեկան մոտ 12,000,000 դրամ շենքի և տարածքի վերանորոգման և բարեկարգման համար և 36,000,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար - ամսական առավելագույնը 100,000 դրամ, տարեկան շուրջ 600,000 դրամ էլեկտրականության համար և 1,800,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար - ամսական առավելագույնը 20,000, տարեկան շուրջ 200,000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար և 600,000 դրամ 3 տարվա՝ 2020-2022 թթ. համար - ամսական առավելագույնը 500,000 դրամ, տարեկան մոտ 3,000,000 դրամ գազի համար և 9,000,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար - տարեկան մոտ 500,000 դրամ գրենական պիտույքների և տնտեսական պարագաների համար և 1,500,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար - տարեկան մոտ 2,000,000 դրամ երաժշտական գործիքների և ուսումնական պարագաների ներմուծման համար և 6,000,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար - տարեկան մոտ 400,000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 1,200,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար

		- տարեկան մոտ 900,000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 2,700,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերն են՝ - տարեկան մոտ 400,000 դրամ հեռախոսակապի, ինտերնետի և բջջային հեռախոսակապի համար և 1,200,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար - տարեկան մոտ 900,000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար և 2,700,000 դրամ երեք տարվա՝ 2020-2022 թթ. համար
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Գյումրու քաղաքապետարանի և Շիրակի մարզպետարանի կրթության և մշակույթի բաժիններ, ինչպես նաև՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ